



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016

MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Առաջնորդ

Bishop Torkom Manougian, Primate

Թիւ 20271
Փետրուար 21, 1968

Արժանաշնորհ
Տ. Ժիրայր Վրդ. Թաշճեան
Հոգեւոր Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
եւ Նախագահ Միական Խորհուրդի
Թօրօնթօ.

Սիրելի Հայր Ժիրայր,

Ստացած ենք 1968 Յունուար 29 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Գանատայի Երջանի Առաջնորդի Փոխանորդ Գեր. Տ. Վաչէ Եպս. Յովսէփեանի նախագահութեամբ՝ Յունուար 28ին գումարուած Ձեր Միական Ժողովին մէջ կատարուած է Միական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձնուին վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Միական Ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Միական Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հանձնէք փութով Առաջնորդարան ղրկել Միական Խորհուրդի նոր Դիւանի անդամոց եւ եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու ատենապետներուն անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Համայնքիդ երես նորընտիր պատգամաւորներուն պիտի ղրկուի Թեմական Պատգամաւորական Ժողովի հրաւերը իր ժամանակին, հետեւաբար բարի եղէք անոնց հասցէները Առաջնորդարան ղրկել առաջին առիթով:

Օրհնելով Միական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ Ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

Տիարք՝ Ժիրայր Բետերեան
Յարութիւն Արթիւնեան
Կարօ Քաւուքեան
Խամոն Արթիւն
Ժիրայր Երէցեան
Վիթթըր Խաչիկ

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ